Սակայն Քորելի ունէր բազմաթիւ պաշտպաններ, որոնց շարքին՝ «Տը Նիւ Եորք Թայմզ»-ի երաժշտական քննադատ Հերբլայտ Եոնայէրկ: 1965ին Մեթրոփոլիթըն օփերային մէջ Մարիա Քալասի հետ Քորելիի ելոյթին անգրադառնելով ան գրած է, թէ Քաւարատտոսի դերը ստանձնած թենորին ձայնը «սրահին մէջ կը թաւալէր հոյակապ ձեւով»: Քորելի արտայայտչական ազատութիւնները նշելով՝ Եոնայէրկ կը բացատրէ, թէ անոր կատարողութիւնը «իւր սեփական տրամաբանութիւնը ունէր»:

Տպաւորիչ հետաքրքրութիւն եւ իմաստու-



Քորելի առաջին անգամ օփերայի բեմ բարձրացած է «Քարմեն»-ի մէջ Տոն Խոսէի դերով: Այնուհետեւ ան կատարած է թենոր երգիչներու զխաւոր բոլոր դերերը, իր սերունդին ամենէն անուանի երգչուհիներուն՝ Մարիա Քալասի, Ռենաթա Թեպալտիի եւ Ժոան Սառըրլոնտիի հետ: Անոր ճակատագիրը օփերայի սրահը Մեթրոփոլիթընը էր, ուր երգած է 368 առիթներով:

Թիւն ցուցաբերելով՝ Քորելի լոյս աշխարհ կը բերէր անտեսուած օփերաներ, օրինակ՝ Տոնի-զեթթի «Փոլիլոթո», ինչպէս նաեւ ժամանակակից ստեղծագործութիւններ, օրինակ՝ Սալվատորէ Ալեկրայի «Ռոմիլիւս»ը (յօրինուած է 1946ին): Ան մեծ ներդրում ունեցած է 19րդ դարու սկիզբը ստեղծագործած երաժիշտ Կասիարո Սփինթինիի գործերուն վերակենդանացումին մէջ: 1954ին Լա Սքալա օփերային մէջ իր առաջին ելոյթին առիթով ան ընտրած է Սփինթինիի «Լա վեսթալ» օփերան, որուն մէջ դեր ստանձնած էր նաեւ Մարիա Քալաս: Ճլորանսի Մայիսի փառատօնին ընթացքին ան կատարած էր Սփինթինիի «Ակնէս Հոհենսթաուֆէն» օփերան, որ գերմաներէնով գրուած հզօր եւ անծանօթ գործ մըն էր:

Քորելի խոր յարգանքի արժանացած էր սարսփելի կերպով խստապահանջ Մարիա Քալասի կողմէ, որ անոր մէջ տեսած էր այն անձը, որուն հետ կրնար օփերայի դերեր կատարել: Սոփրանօ երգչուհի Պրիսիլա Նիլսոնի համար ան միակ թենոր երգիչն էր, որ կրնար քայլ պահել «Թուրանո» օփերային մէջ իր դերին պահանջած ուժին հետ: Թէ եւ Քորելիի ձայնային ֆիզիքական հզօրութիւնը անոր երգեցողութեան ամենէն ուղիղաբան յատկանիշն էր, սակայն ան կարողութիւնը ունէր դիպուկ գագաթնակէտեր եւ քաղցրահնչուն մեղմ ձայներ արտաբերելու: Անոր ասպարէզին զարգացումին հետ աճած էր նաեւ անոր գեղարուեստական ուժը:

ՊԱՏԵՐ ԽԾԲԾՈՂ «ԱՍՏՂ» ՄԸ

ՍՈՎՈՐԱԲԱՐ ԸԱԿԱՌԱԿԸ ԿԸ ՊԱՏԱԵԻ. ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ ԿԱՆԵՏԱՆԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԷ: ՍԱԿԱՅՆ ԱՅՍ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԳԵՂԱԿԱՐ ՄԸ ՍՊՐԱԾ Ե ԹԱՆԳԱՐԱՆ: «ՊԻ.ՊԻ.ՍԻ.» ԿԸ ԳՐԵ, ԹԵ ԻՆՉՊԵՍ.

Գեղանկար մը, զոր պատեր խժրժող արուեստագէտ Պանքսի գաղտնաբար մտցուցած էր Լոնտոնի Թէյթ պատկերասրահը եւ զայն փակցուցած էր պատին, աննկատ մնացած է քանի մը ժամ, մինչեւ որ անիկա գետին ինկած է:

Գեղանկարը կը պատկերէր գիւղական տեսարան մը, որուն վրայ ոստիկաններու յատուկ ժապակէ մը գծուած է:

«Պի. Պի. Սի.», որ կը հաղորդէ լուրը, կը գրէ, թէ գեղանկարին կ'ընկերակցէր բացիկ մը, որուն վրայ գրուած էր. «Պանքսի 1975. Բրիտանիոյ մէջ ռճրային արարքներու հետապնդումը փճացուցած է գիւղական շրջանները բոլորիս համար. 2003, իւղաներկ՝ պատտաւի վրայ»:

Բացիկը նաեւ կ'ըսէր. «Արուեստագէտը գտած է առանց ստորագրութեան իւղանկար մը եւ անոր վրայ սթենսիլով գծած է ռճրի մը վայրը շրջափակող ժապակէներ, որոնք կը գործածուին ոստիկաններու կողմէ: Ան գեղանկարը այս ձեւով փճացնելով՝ կը միտի ցոյց տալ, թէ մեր երկիրը որքան կը տառապի ռճրի եւ մանուկներու բռնաբարութեան հալածախտէն»:

Թէյթ պատկերասրահին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կ'ըսէր, թէ մարդ մը «իւր անձնական մէկ իրը ձգած էր սրահի մը մէջ: Թէյթի ապահովութեան հսկող պահակները գտած էին զայն կարճ ժամանակ մը ետք: Անիկա վերցուած էր եւ տարուած՝ պատկերասրահին կորսուած իրերու բաժնիքը»:

Այժմ արուեստագէտը նոյն գեղանկարին մէկ տարբերակը կը վաճառէ Լոնտոնի Թոմ Թոմ պատկերասրահին մէջ: Գեղանկարին կ'ընկերակցի վիտուճ մը, որուն մէջ Պանքսի նկարուած է պատտաւը Թէյթի պատին վրայ գետեղելու



Գիւղական տեսարան մը, որուն վրայ ռճրի մը վայրը շրջափակող ժապակէներ գծուած են, քանի մը ժամ կախուած մնաց Բրիտանիոյ մակարդակաւոր «Թէյթ» պատկերասրահին մէջ:

պահուէն: Պանքսի իր բուն անունը գաղտնի կը պահէ հետապնդումէ խուսափելով: Պատերու վրայ խժրժած անոր պատկերները կարելի է տեսնել աշխարհի տարբեր քաղաքներու մէջ:

Այս տարի գեղանկարչութեան «Թրուշը» մրցանակին հանդիսութիւններէն առաջ ան «Մայնտ տը քրէյօ» (աղբն ալ յիշեցէք) բառերը խժրժեց Թէյթ պատկերասրահին սանդղակներուն վրայ:

Այս տարուան սկիզբը ան պատկերներ խժրժած էր կովերու, ոչխարներու եւ խոզերու մարմնին վրայ: «Յուցահանդէսը» փակուեցաւ, որովհետեւ անասունները «տաքցան եւ ընկճուեցան»:

Ո՞Վ ԳԾԱԾ Է «ՄՈՆԱԼԻՉԱ»Ն

ՊՐԻԹԱՆԻԵԱ ԸԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԵ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԸԱՄԱՁԱՅՆ, ԲՐԻՏԱՆԱՑԻԵ ՉԵՆ ԳՆԱԿԱՏԵՐ ԻՐԵՆՑ ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ԺԱՆԱՆԳՈՒԹԻՒՆԸ: ԱՆՈՆՑ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՒ ՉԻ ԳԻՏԵՐ, ԹԵ ԱԵՒԱՐԻՒ ԿԱՐԳ ՄԸ ԳԼՈՒԵ ԳՈՐԾՈՅՆԵՐԸ ՈՐՈՆՑ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՆ

Պրիթանիա հանրագիտարանին կողմէ 500 բրիտանացիներու վրայ կատարուած իրականացումը համաձայն, անոնց 85 առ հարիւրը չի գիտեր, թէ «Տը սքրիմ» գեղանկարը կը պատկանի էտուարտ Մունքի: Անոնց կէտը չէ կրցած Լէոնարտօ տա Վինչիի անունը նշել «Մոնալիզա»ի գեղանկարին դիմաց եւ 7 առ հարիւրը կարծած է, թէ աւստրալիացի արուեստագէտ եւ պատկերասփեւոյ հաղորդավար Ռոլֆ Հերիս գծած է Մունքի «Ջրաշուշանները»:

Բրիտանական արուեստը եւս շփոթի մատնած է շատերը: Այսպէս, վիճակագրութեան մասնակցած բրիտանացիներուն աւելի քան կէսը չէ կրցած գիտնալ, թէ «Հէյ ռոյալ» գեղանկարը կը պատկանի Քոնսթէյպլի, իսկ 10էն մէկը կարծած է, թէ Պոթիլլի գծած է Տէյվիտ Հոքսէյի «Է պիկըր սփիշը» գործը:

Վիճակագրութիւնը նաեւ ցոյց տուած է, թէ մասնակցողներուն 43 առ հարիւրը իր կեանքին մէջ երբեք չէ այցելած արուեստի պատկերասրահ մը, թէ եւ անոնց 68 առ հարիւրը նշած է, թէ արուեստը կարեւոր ազդակ մըն է ընկերութեան մէջ:

Վիճակագրութեան մէջ ամենէն ցած մակարդակը արձանագրած են 18-24 տարեկան բրիտանացիները, թէ եւ անոնց կէսը արուեստի հետ որդ կապ մը ունեցած է: Այս սերունդէն ոչ ոք կրցած է նշել կիւսթաւ Քլիմթի անունը՝ անոր հռչակաւոր «Տը քիս» գեղանկարին դիմաց:

«Բրիտանիա մարդոց նախանձը կը շարժէ իր գեղարուեստական ժառանգութեամբ, եւ շատ ցաւալի է, որ մեզմէ միայն քիչերը հետաքրքրութիւն կը ցուցաբերեն աշխարհի ժառանգութեան նկատմամբ, տակաւին չնշելու համար մեր գեղարուեստական գանձերուն», կ'ըսէ Պրիթանիա հանրագիտարանին առեւտրական բաժանմունքին տնօրէնը:

«Պի. Պի. Սի.»-ի կողմէ կատարուած վիճակագրութեան մը ընթացքին բրիտասարդ մը ենթադրուած էր, թէ «Մոնալիզա»ն կը պատկանէր Լէոնարտօ տի Քափրիոյի, իսկ ուրիշ մը զայն վերագրուած էր Վան Կոկի: Ռոնուար առնչուած էր «Ջրաշուշաններ»ուն հետ, Վան Կոկ՝ «Տը սքրիմ»ի:

Լոնտոնի Ալպեմարլէ պատկերասրահին պատասխանատուն վիճակագրութեան մէջ ի յայտ եկած տղիտուութիւնը կը վերագրէ 1990-ական տարիներու բրիտանական արուեստին, որ համակած է նոր սերունդը:

«Վիճակագրութեան մասնակցողներէն շատերը կարողացած են ճանչնալ Տամայըն Հիրսթի ապակիի տուփի մէջ դրուած շանձուկը կամ Թրէյսի էմիլի իստեյնի անկողինը, պարզապէս, որովհետեւ լրատուամիջոցները միայն նման բաներու վրայ կը կեդրոնանան», կ'ըսէ ան:



ԼԵՆԱՐՏՕ ՏԻ ԶՄՓՐԻՈ՞...

Մինչ եւրոպական այլ երկիրներու մէջ արուեստը «հարտալի բան մըն է», կ'աւելցնէ ան, Բրիտանիա կը գատորոշուի ազգային իր ժառանգութեան նկատմամբ անտարբերութեամբ: «Գոյուցիւն ունի բրիտանացի արուեստագէտներու սերունդ մը, որ կը գծէ «աւանդական» նիւթեր՝ որդեգրելով հին վարպետներու կարողութիւններն ու արհեստագիտութիւնը, կ'ըսէ ան: Սակայն, որովհետեւ անոնք ներկիւ կը գծեն պատասով վրայ, կ'արհամարհուին եւ կ'անտեսուին սովորաբար անոնց կողմէ, որոնք գծել չեն գիտեր եւ աւելի դիւրին ուղիներ ընտրած են»:

Պատրաստեց
Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

«ԲԱԻԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԵԼԻ ԷԻ»

«ՈՈՅԹՈՐՁ» ԿԸ ԳՐԵ, ԹԵ ԻՏԱԼԱՅԻ ԳԻՏԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԾՐԱԳՐԵՆ ԲԱՆԱԿ ՓԵԹՈՐԱՐԵԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ԿԵՐԱԿԱՋՍԵԼ ԱՆՈՐ ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՒՈՅԹԸ

Իտալացի 14րդ դարու բանաստեղծ Ֆրանչեսկո Փեթրարք հարիւրաւոր նամակներ ձգած է իր ետին՝ նկարագրելով իր կեանքն ու մտածումները: Այժմ գիտնականներ կը ծրագրեն գերեզմանին դուռ հանել անոր աճիւնները եւ աւելին յայտնաբերել անոր մարմնին ու ոսկորներուն վերաբերեալ:

Ուսումնասիրողներ այս ամիս պիտի բանան բանաստեղծին մարմարէ դագաղը հիւսիսային Իտալիոյ Արքուեա Փեթրարք գիւղաւանին մէջ, ուր ան մահացած է 1374ին եւ այնուհետեւ գիւղաւանը վերանուանուած է անոր անունով: Գիտնականներ պիտի քննեն Փեթրարքի աճիւնները՝ պատկերացնելու համար անոր ֆիզիքական կերպարանքը եւ առողջական վիճակը:

«Թէ թէ բանաստեղծին աճիւնները լաւ վիճակի մէջ պահպանուած են, ապա պիտի կարենանք գիտնալ, թէ ան ի՞նչ երեւոյթ ունէր: Պիտի գիտնանք անոր հասակն ու մէջքին լայնքը, ինչպէս նաեւ այն հիւանդութիւնները, որոնցմէ կը տառապէր», կ'ըսէ Փատովայի համալսարանէն մարդակազմութեան եւ ախտաբանութեան մասնագէտ մը՝ Վիլի Մարին:

Փեթրարք հռչակաւոր դարձած է իր հարիւրաւոր սիրային բանաստեղծութիւններով, զորս ուղղած է Լորա անուանով խորհրդաւոր կնոջ մը, զոր պաշտած է հեռուէն: Փեթրարք այս կնոջ համար կատարելագործած է հնչեակ, որուն ազդեցութիւնը պիտի կրէին Ուիլիամ Շէքսպիր եւ բազմաթիւ այլ բանաստեղծներ:

Փեթրարք նաեւ դասական գիտութիւններու մեծ մասնագէտ էր եւ կը նկատուի մարդկայնութեան շարժումին ռահվիրան: Փլիլոսոփայական այս շարժումը ներշնչուած էր հնադարեան փիլիսոփաներու մտածողութենէն եւ միջնադարու լիտոփաներու մտածողութիւններուն փոխարէն՝ շեշտը կը դնէր աշխարհիկ մտահոգութիւններու վրայ: Մարին, որ մասնակցած է Փատովայի Անթոնիօ սուրբին աճիւններուն արտաբերման,

կ'ըսէ, թէ 19րդ դարուն Փեթրարքի աճիւններուն վրայ կատարուած ուսումնասիրութիւններ կասկածելի արդիւնքներ տուած են, եւ ինք անհամբեր էր զանոնք սրբագրելու: «Անոնք գրած են, թէ Փեթրարք 1.83 մետր հասակ ունէր, ինչ որ բանաստեղծին ժամանակներուն համեմատած՝ շատ երկար էր: Եթէ ան իրապէս այդքան բարձրահասակ էր, ապա պատմութեան մէջ յիշուած պիտի ըլլար իրրեւ հակա մը», կ'ըսէ Մարին:

Ան նաեւ կը յուսայ իր պաշտօնակիցներուն հետ վերակազմել Փեթրարքի գանկը, որ քանի մը կտորի բաժնուած է նախորդ ուսումնասիրութեան ժամանակ: Անոր նպատակն է վերակազմուած գանկին կաղապարը առնել եւ զայն օգտագործել՝ համակարգիչի միջոցով ստեղծելու համար անոր պատկերը:

«Միջնադարեան դիմանկարչութիւնը ճշգրիտ չէր, սակայն արդի արհեստագիտութեան շնորհիւ կրնանք գիտնալ, թէ Փեթրարք ի՞նչ դիմագիծ ունէր», կ'ըսէ Մարին:

Ինչ որ ալ ըլլայ նոր ուսումնասիրութիւններուն արդիւնքը, արդէն գիտենք, թէ բանաստեղծը ի՞նչպէս դատած է իր արտաքին երեւոյթը: «Երիտասարդութեան օժտուած է ի արագաշարժ եւ աշխուժ մարմնով, թէ եւ արտակարգ ուժի տէր չէի: Ճիշդ է, որ ուշագրաւ գեղեցկութիւն մը չունիմ, սակայն բաւական համակրելի է ի լաւ օրերուս», գրած է ան:



Կ'ըսէ, թէ 19րդ դարուն Փեթրարքի աճիւններուն վրայ կատարուած ուսումնասիրութիւններ կասկածելի արդիւնքներ տուած են, եւ ինք անհամբեր էր զանոնք սրբագրելու:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ
ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ՀՈԳԵՒՈՐ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ:

Դասախօս՝
ՇՈԳԸ. Տ. ՄԱՇՏՈՅ ՎՐԴ. ՉՈՊԱՆԵԱՆ

Սիւթ՝
«ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԵՒ ՀԱՍԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ»

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացաւորները:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐԵՐՈՐԻՂ
Ս. ՆՃԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ՆՇԱՍՐ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՒ ՌԻՍԱՆԵԼԻ ԵՐԵՒՈՅԹ ՄԵ

Բոլոր անոնք, որոնք հետեւեցան Միւնիխի մէջ տեղի ունեցած Պայէրն Միւնիխ - Լիոն տաք ճակատումին, որ վերջ գտաւ հիր կապին յաղթանակով, 2-1, վստահաբար կանխատեսեցին ուշագրաւ այն երեւոյթին, զոր պարզեցին գերմանացի համակիրները թրիպիւններուն մէջ:

Այն պահուն, երբ Լիոնի պրակիցի մարզիկ Էլպէր կը փոխարինուէր եւ դուրս կու գար դաշտէն, մրցակից կապին՝ Պայէրնի մտաւորապէս 80 հազար համակիրները յոտնկայս ծափող ջոյններով հանդէս եկան, ստեղծելով յուզումնախառն պահեր: Էլպէր երկար տարիներ կրած է Պայէրնի շապիկը, հետեւաբար գերմանացի համակիրները տակաւին երախտապարտ կը մնան անոր փաստօրէն: Եւ ըսել, որ Լիոնի յաղթանակի կողմ նշանակած էր նոյնինքն Էլպէր...

Ոչ միայն ողջունելի, այլեւ օրինակելի եւ ուսանելի երեւոյթ մըն է այս մէկը, մանաւանդ այն պահուն, երբ ֆուտպոլը աշխարհի տարածքին սկսած է հետզհետէ «գալանանայ»... Ի վերջոյ ֆուտպոլը եւս մարզական իրադարձութիւն է, նոյնիսկ եթէ անիկա լրիւ քաղաքականացած է այսօր գրեթէ մէկն տեղ: Իսկ մարզական իրադարձութիւնները մարզական ոգի կ'ենթադրեն, այնպէս ինչպէս ապացուցեցին գերմանացի համակիրները նախանցեալ գիշեր:

Ֆրանսական պատկերասփիւռի «Բանայ Փիլիս» կայանի մեկնաբանը ի տես վերոյիշեալ երեւոյթին իր գնահատականը տուաւ մէկ բառով. «շափօ»: Այո՛, իսկապէս արժանի են գերմանացի համակիրները այդ գնահատականին, իրենց բացառիկ ծեսօրին համար: Առ այդ, մենք այ կը ձայնակցինք ֆրանսացի մեկնաբանին եւ մեր կարգին մեր գլխարկները (շափօները) վարկ'առնենք նման հոյակապ երեւոյթի մը առջեւ: Երեւոյթ մը, որ մանաւանդ մեզի՛ լիբանանցիներուն համար կը մնայ ուսանելի: Հասկցողին շատ բարեւ:

Հ. Վ.

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՇՆՈՐԱԿՈՐԷ ՃԱՏՐԱԿԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան շնորհատրական գիր յղեց Լիբանանի ճատրակի ֆետերասիոնին, զայն շնորհատրելով ՖԻՏԵԻ կողմէ Լիբանանի «Ոսկեայ Մրցանակ» ի տուչութեան առիթով:

Նշենք, որ Հայքիտիքի մէջ (Յունաստան) տեղի ունեցած ՖԻՏԵԻ խորհրդածողովին Լիբանան ստացած էր այս մրցանակը անցնող տարիներուն Պէյրութի մէջ բազմաթիւ միջազգային մրցաշարքեր եւ ախոյեանութիւններ կազմակերպելուն եւ աշխուժ գործունէութիւն վարելուն համար:

ՅՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՍԿԱՄԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը Չորեքշաբթի օր գումարեց իր հերթական ծողովը: Օրակարգին վրայ գտնուող ամէնէն փոքորկոտ հարցը Լիբանանի հաւաքականի եւ Նրժմէի խմբապետ Մուսա Հրժէյժի նկատմամբ պատժամիջոց որդեգրելն էր: Հրժէյժ, որ Հիւսիսային Քորէայի դէմ մրցումին մերժած էր դաշտ իջնել, որովհետեւ իրեն վրացուած էր խմբապետի պաշտօնը, 3 ամիսով կախակալուեցաւ:

Ֆետերասիոնը նաեւ որոշեց Ա. դասակարգի մրցումները վերսկսիլ 2 Դեկտեմբերին:

ԹԵՆԻՍ. «ՄԱՍԹԸՐԶ»

ՔԼԻՍԹԸՐԶ ՉԱԽՉԱԽԵՑ ՏԵՄԵՆԹԻԵԻԱՆ

Աղջկանց «Մասթըրզ» մրցաշարքի իր առաջին մրցումին աշխարհի թիւ 1 դասուած պէլճիքացի Քիմ Բիխթըրը եղաւ անխնայ, եւ նուազ քան մէկ ժամի կարիքը ունեցաւ տապալելու համար իր մրցակիցը՝ Էլենա Տեմենթիեւան, 6-2 եւ 6-2 արդիւնքով:



Քափրիաթի

Ի տարբերութիւն Բիխթըրի, Քափրիաթի եւ Ռուպին դժուարութեամբ յաղթեցին իրենց մրցումները:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները

ԿՍՐՄԻՐ ԽՄԲԱԿ

Քիմ Բիխթըրը (Պէլճիք) - Էլենա Տեմենթիեւա (Ռուսիա) 6-2, 6-2
Չանտա Ռուպին (ԱՄՆ) - Ամերի Մորեսսո (Ֆրանսա) 4-6, 6-4, 6-2

ՍԵՒ ԽՄԲԱԿ

Ճենիֆըր Քափրիաթի (Մ. Նահանգներ) - Այ Սուկիյամա (Ճափոն) 7-5, 7-6

ԹԵՆԻՍ

ՏՂՈՑ «ՄԱՍԹԸՐԶ»Ի ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ, ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴԺՈՒԱՐ ԽՄԲԱԿԻ ՄԵՋ

8-16 Նոյեմբերին Թեքսասի Հիուսթըն քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ տղոց թենիսի «Մասթըրզ» մրցաշարքը, որ եղանակի վերջին միջազգային մրցաշարքն է եւ ի մի կը բերէ տարուան լաւագոյն արդիւնքները արձանագրած 8 թենիսիստները:



Նալպանտեան

Մասնակիցները վիճակագրութեամբ բաժնուեցան երկու խմբակներու:

ԿՍՊՈՅՏ ԽՄԲԱԿ

Ռոմէ Ֆետերէր (Չուիլիքիա)
Մնորէ Ակասի (Մ. Նահանգներ)
Խուան Բարլոս Ֆերերո (Սպանիա)
Դաւիթ Նալպանտեան (Արժանթին)

ԿՍՐՄԻՐ ԽՄԲԱԿ

Էնտի Ռոտիք (Մ. Նահանգներ)
Քարլոս Մոյա (Սպանիա)
Կիլերսո Քորիա (Արժանթին)
Ռայնըր Շուրլըր (Գերմանիա)

www.hamazkayin.com

Le Savoir-Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
Gemmayzé, (01)447000-445396
(03)627728/9
Fax: (01)265187-582357
E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

Հ. Մ. Ը. Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՐԵԳ ՅՈՎՅԱՆՆԻՍԵԱՆԻ



Երէկ, Հ. Մ. Ը. Մ.Ի Շրջանային Վարչութիւնը այցելութիւն մը տուաւ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի:

Շրջանային Վարչութիւնը դեսպանին պարգեց Հ. Մ. Ը. Մ.Ի շրջաններու մարզական եւ սկստական գործունէութիւնը: Դեսպանը, իր կարգին, վեր առաւ Հ. Մ. Ը. Մ.Ի դերը գաղութին մէջ եւ անդրադարձաւ Համահայկական ինտելեկտուալ կարեւորութեան՝ տարբեր երկիրներու հայ մարզիկները քով-քովի բերելու մէջ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՇԻՔԱԿՕ ՊՈՒԼԶ ՅԱՂԹԵՑ

Էն. Պի. էյ. ի երէկուան մրցումներուն Շիքակօ Պուլզ յաջողեցաւ արձանագրել եղանակի իր շրջ յաղթանակը: Նիւ Օրլինզ, իր կարգին, յաղթանակ մը արձանագրեց Ֆիլատելֆիա Միքսըրգի վրայ եւ ամրապնդեց իր դիրքը կեդրոնական Գօտիի պարագլուխի դիրքին վրայ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Ուաշինկթըն - Տալաս	100-90
Նիւ Օրլինզ - Ֆիլատելֆիա	106-99
Շիքակօ - Օրլանտօ	106-100
Տիբորոյիթ - Պոսթըր	96-88
Միլուոքի - Նիւ Եորք	106-90
Սպրանքսթօ - Միլուոքսթօ	125-121
Տենվըր - Քիլվինտ	93-89
Եուրթ - Ֆեօնիքս	91-80
Կոլտըն Սթըյթ - Աթլանթա	99-72
Փորթլենտ - Մենֆիս	93-87

ՀԱՅՐԵՆԻ ՍԱՐՉԱՅԻՄԱՐԸ

2004Ը՝

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՏԱՐԻ

Հայքիտիքի մէջ իր աւարտին հասած ՖԻՏԵԻ խորհրդածողովին որոշում առնուեցաւ 2004ը յայտարարելու «Տիգրան Պետրոսեանի Տարի»:

Նշենք, որ Տիգրան Պետրոսեան 1963-1969 հանդիսացած է ճատրակի աշխարհի ախոյեան:

ԽՈՐԵՆ ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆ՝ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՍԱՐՉԻՉ

Հայաստանի 17էն վար տարիքային դասակարգի ֆուտպոլի հաւաքականի մարզիչ եւ «Փիւնիկ» նախագահ Խորեն Յովհաննիսեան արժանացաւ «Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր մարզիչ» կոչումին, իր գլխաւորած Հայաստանի պատանիներու կազմը Եւրոպայի ախոյեանութեան ընտրական փուլը յաղթական աւարտելուն համար:

DAY WATER

Մասնավաճառի դրուքին
առնալով 10,000 Լ.Ո.

RECOMENDED FOR BABIES

Clean & Safe Water
Under Hygienic Condition
NATURAL - PURELIGHT™ LOW IN SODIUM

Free Delivery
19 Litre
2000.L

Approved By Rain Water

DAY WATER, Tel.: 03/435298

ԿԻՊՐՈՍԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐՅԸ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ

Թուրքիա կրնայ հետեւողականորեն պնդել, որ Եւրոպական Միութեան անդամակցելու իր ճիգերը կիպորոսի տաճանակին կապուած չեն, սակայն անիկա այլեւս պէտք է «գլուխը աւազէն դուրս հանէ» եւ ընդունի, որ փոքրիկ կղզին առանցքային դերակատարութիւն կրնայ ունենալ Եւրոպայի ծիրէն ներս անոր ապագային մէջ, յայտնած են մեկնաբաններ երէկ:

Ե. Միութեան նորագոյն գոյնազոյն կատարուեցաւ Չորեքշաբթի օր, երբ Եւրոպական Յանձնաժողովը Անգարայի մասին տեղեկագիրի մը մէջ ըսած է, թէ կիպրոսի գծով համաձայնութեան մը չգոյնազոյնը «կրնայ լուրջ խոչընդոտ մը» ըլլալ անոր անդամակցութեան ճիգերուն համար:

Թէեւ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլի խոստացած է, որ Թուրքիա ճիգեր ի գործ պիտի դնէ կղզիին բաժանումին հարցը լուծելու համար, ան յայտնած է, որ կիպրոսի առնչուող համաձայնութիւն մը մաս չի կազմեր այն քայլերուն, զորս Թուրքիա պէտք է առնէ անդամակցութեան առնչուող բանակցութեանց սկսելու համար:

Սակայն մինչ կիպրոս կ'ուղղուի դէպի Ե. Միութեան անդամակցութիւն (յառաջիկայ տարուան Մայիսին), Անգարայի առարկութիւնները չեն կրնար փոխել կիպրոսի բաժանումին իրականութիւնը եւ այն տուեալը, թէ Թուրքիա հոն զինուորական ներկայութիւն է, ըսած է Եւրոպացի դիւանագէտ մը:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՅԸ ՊԵՏԵ Ե ԼՈՒԾՈՒԻ

Իրանտայի վարչապետ Պերթի ԼՀաուն երէկ Նիկոսիոյ մէջ յայտնած է, որ Թուրքիա չի կրնար անտեսել կիպրոսի շարունակուող բաժանումը, եթէ կ'ուզէ Ե. Միութեան անդամակցելու առիթ ունենալ:

Ան կը խօսէր կիպրոս կարճատեւ այցելութեան մը ընթացքին:

Կիպրոսի հարցը «պէտք է լուծուի», շեշտած է ան, աւելցնելով, որ անիկա «իրաւական կամ գործընթացային կապ մը չէ» Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութեան համար:

Կիպրոսի նախագահ Թասոս Փափատոփոլոսի հետ տեսակցութեան մը ետք, ԼՀաուն թղթակիցներու ըսած է, թէ ամէն մարդ կ'ուզէ «Մայիսին միացեալ կիպրոս մը տեսնել Ե. Միութեան ներքեւ»:

ԼՀաուն, որուն երկիրը Յունուար 1ին պիտի ստանձնէ Ե. Միութեան վեցամսեայ նախագահութիւնը, յայտնած է, որ ՄԱԿի պատրաստած վերամիացման ծրագիրը լաւագոյն ձեւն է «գծուարութիւնները հարթելու»:

Անոր շուրջ բանակցութիւնները ձախողած էին Մարտին, Թուրքիայի պարտիզիկական Ռաուֆ Տենքթաշի կողմէ ծրագիրը մերժուելէ ետք:

ՅՈՒՆԱՍԱՆ ԿՈՂՋՈՒՆ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միւս կողմէ, Յունաստան երէկ վերահաստատած է իր գոհունակութիւնը Ե. Յանձնաժողովին տեղեկագրերին մէջ կիպրոսի հարցին լուծման գծով այն հաստատումը, թէ այդ լուծումը կարելի տուեալ մըն է Ե. Միութեան անդամակցելու Թուրքիոյ ճիգերուն համար:

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Փանոս Պեկիթիս, թղթակիցներու ըսած է, թէ առաջին անգամ ըլլալով է, որ Ե. Միութեան մէկ տեղեկագիրը «կարելի առաւելագոյն յատկութեամբ կը մատնանչէ կապը Թուրքիոյ Եւրոպական փառասիրութիւններուն եւ կիպրոսի բաժանումին լուծման միջեւ»:

Մինչ այդ, պաշտպանութեան նախարար Եաննոս Փափատոփոլոս երէկ մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսած է, թէ նախկին խորհրդային պլոքին հետ իր սահմաններուն վրայ գետնորում բանակային միաւորներ պիտի փոխադրէ Թուրքիոյ հետ իր սահմանը՝ բանակին վերադասաւորման ծրագրերներուն ծիրէն ներս:

«Բանակային ուժերը պիտի վերահաստատենք դէպի էվրոս գետ եւ Եգէական ծով, ուր ներկայիս կը գտնուի գլխաւոր սպառնալիքը», յայտնած է ան, աւելցնելով «Հիւսիսային սպառնալիքը այլեւս գոյութիւն չունի»:

Ան իր յայտարարութիւնը կատարած է Յունաստանի կառավարութեան բանակը վերադասաւորելու որոշումէն ետք:

(ԱՅՓ)

ԵԳԻՊՏՈՍ

ԲԱՆՏԱՅԻՆ ԶԱՐԶԱՐԱՆՔԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ՄԱՀԱՅԱԾ Է «ԻՍԼԱՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ»ՈՒ ԱՆԴԱՄ ՄԸ

ԳԱՀԻՐԷ, 6 (ԱՅՓ).— «Իսլամ Եղբայրներ» շարժումէն անդամ մը մահացած է պետական յատուկ ապահովական ուժերուն կողմէ կիրառուած չարաբանութիւններու պատճառով, յայտարարեց իսլամական շարժումը, որ արգիլուած է Եգիպտոսի իշխանութիւններուն կողմէ:

Յայտարարութիւնը կը յայտնէ, թէ Սաատ Բուսթուպ (43 տարեկան), որ ձերբակալուած էր 31 Հոկտեմբերին, մահացաւ Երկուշաբթի օր, հարցաքննութեան ընթացքին այլազան ձեւի չարաբանութիւններու եւ պատիժներու ենթարկուելէ ետք: Յայտարարութիւնը կը դատապարտէ «ճեղքը», որ կը խախտէ բոլոր կարմիր գիծերը:

Եգիպտոսի ոստիկանութեան կողմէ որեւէ մեկնաբանութիւն չկատարուեցաւ:

ՀՌՈՍԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՌՈՒՄԻԱ ԱՄՐԱՊՆԳԱԾ ԵՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսիա եւ Ե. Միութիւն երէկ յայտնեցին, թէ Հոռուի մէջ կայացած «լայնածիր եւ շինիչ» վեհաժողովի մը ընթացքին կարելի տուեալ է ամրապնդուել անոր արտաքին քաղաքականութեան հարցերը:

Անոր մասնակցած են Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Պուտին, Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի եւ Իտալիոյ վարչապետ Ե. Միութեան ներկայ նախագահ Սիլվիո Պերլուսոնի:

Միացեալ մամուլի ասուլիսի մը ընթացքին, Պերլուսոնի ըսած է, թէ վեհաժողովը ցոյց տուած է Եւրոպայի եւ Ռուսիոյ միջեւ «աւելի մեծ գործակցութեան կամքը»:

Երկու կողմերուն նախատեսութեամբ, մուտքի արտօնագիրներու ամբողջական ջնջում տեղի պիտի ունենայ՝ ոչ շատ հեռու ապագային:

Վեհաժողովէն ետք հրապարակուած փաստաթուղթը ըսած է, որ երկու կողմերը համաձայնած են «Ե. Միութեան եւ Ռուսիոյ միջեւ ռազմավարական գործակցութեան թափ տալ հասարակաց արժեքներէ վրայ հիմնուելով, Եւրոպական ցամաքամասին վրայ կայունութեան, ապահովութեան եւ բարգաւաճման ամրապնդումին նպատակով»:

Պաշտօնատարներ գիտական գործակցութեան եւ արհեստագիտութեան եւ «Նորոգիչ» իր ոռոսական ոստիկանական սպասարկութեան միջեւ աւելի սերտ գործակցութեան վերաբերեալ երկու համաձայնագիրներ



Փրոտի, Փութին, Պերլուսոնի

կնքած են:

ՊԵՐԼՈՒՍՈՆԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԿԱՍՏԱՍԱՆԷ

Պերլուսոնի եւրոպական մամուլը ամբաստանած է Չեչենիոյ կացութեան մասին «պատմութիւններ պատմելու» յանցանքով:

Պերլուսոնի պաշտպանած է մարդկային իրաւունքներու վերաբերեալ Պուտինի քայլերը, բնորոշելով որ Ռուսիա ինքզինք կը պաշտպանէր «առաջնահայեցի» յարձակումներէ, երբ Չեչենիոյ պատերազմին ձեռնարկած է:

«ԵՆԻՔՈՍ»Ի ՀԱՐՅՈՎ «ԶԱՆԹԱԾ»Ի ՏԵՂԻ ՊԻՏՅՈՒՄԸ Կ'ԸՍԵ ՓՈՒԹԻՆ

Միւս կողմէ, Փութին շեշտած է, որ «Ենիքոս» ընկերութեան հարցով «որեւէ շանթ» տեղի պիտի չտայ, ընդդէմ սերտ գործակցութեան վերաբերեալ երկու համաձայնագիրներ

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ

ՅԱԹՇԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԻՍԱՏ ԶԳԵՑ ԿԱՐԵՒՈՐ ԺՈՂՈՎ ՄԸ

Յաթիի ղեկավարութիւնը կիսատ ձգեց կարելի ժողով մը, որուն ընթացքին չէր յարողած լուծել անոր կառավարութեան կապուածութեան առնչուող վէճ մը, որուն պատճառով կ'ուշանայ անոր դահլիճին յայտարարութիւնը:

Նիստէն դուրս եկող ղեկավարները, որոնց կարգին էր վարչապետ Ահմէտ Քորէյ, մերժեցին յայտարարութիւն կատարել: Յաթիի ղեկավարութիւնը երկու օրուան մէջ նման երեք հանդիպումներ ունեցաւ լուծելու համար տաճանակը, որ սակայն մնաց անյլոթ: Պաշտպանութեան իշխանութեան նախագահ Եասըր Արաֆատ եւ Քորէյ ցարդ չյաջողեցան համախոհութիւն մը գոյացնել ներքին գործոց նախարարի նշանակումին մասին, իւրաքանչիւր անդրդուելի ու անպիշող մնալով իր կեցուածքին վրայ: Արաֆատ կը մերժէ Քորէյի առաջարկը նախարարութիւնը Նասր Եուսէֆի յանձնելու մասին:

Յաթիի ղեկավարութեան անդամ պաշտօնատար մը ըսաւ, որ հարցը բաւական բարդ ու լուրջ է: Արաֆատ Քորէյը նշանակած էր մէկ ամիս առաջ՝ առաջնորդելու համար ութամսեայ արտակարգ կառավարութիւն մը, որուն իշխանութեան պայմանաժամը արտօնեցաւ երեքշաբթի օր: Ապա, Արաֆատ Քորէյէն պահանջեց շարունակել իր փոխանցման հանգրիւանի վարչապետ, մինչեւ որ անոր կառավարութիւնը կապուի:

Մինչ այդ, ելեւմտեցի նախարար Սայամ Ֆայէտ երէկ ըսաւ, որ փոխանցման հանգրուանի կառավարութիւնը օրինական չէ: Ան աւելցուց, որ արտակարգ դահլիճին իշխանութիւնը արտօնեցաւ 4 Նոյեմբերին եւ արտակարգ որեւէ իրավիճակ կարելի չէ երկարաձգել: Ֆայէտ շեշտեց, որ ներկայիս գործող կառավարութիւնը իրաւական գետնի վրայ օրինական որեւէ հիմունք չունի:

Միւս կողմէ, պաղեստինեան ապահովութեան ուժերը երէկ յայտնեցին, որ Բեթլեհէմի մէջ ձերբակալուած են երկու ծայրայեղականներ, որոնք կը ծրագրէին Իսրայիլի դէմ անձնապահական գործողութիւններ: Ըստ իշխեալ աղբիւրներուն, ձերբակալութիւնները տեղի ունեցած են քանի մը օր առաջ:

Նապոլի մէջ երէկ սպանուեցաւ պաղեստինցի կին մը: Սպահովութեան ու հիւանդանոցային աղբիւրները հաղորդեցին, որ Իմիդատ Ապու Ռաս սպանուեցաւ, երբ Նապոլի ներխուժող իսրայիլեան ուժեր կրակ բացին: Նապոլի մտած էին աւելի քան տասը հրասայլերով եւ 50 ձիգերով պինուորներ:

ՆԱԺԱՖԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ

ՓԵՆԹԱԿՈՆ ԿԸ ԾՐԱԳՐԷ ԿՐԾԱՏԵԼ ԻՐԱՔԻ ՄԵՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒժԵՐՈՒՆ ԹԻՒԸ

Փենթակոնը կը ծրագրէ շարժական կարգավիճակ հաստատել Իրաք գտնուող ամերիկեան ուժերուն, ինչպէս նաեւ կրճատել անոնց թիւը՝ թափ տալով իրաքեան ապահովութեան ուժերուն յաւելումին, յայտնեցին բարձրաստիճան պաշտօնատարներ:

Պաշտպանութեան նախարար Տոնրլոտ Ռամսֆելտ ստորագրած է հրամանագիրներ, որոնց լոյսին տակ մարինիկ ուժերը Իրաք պիտի վերադառնան յառաջիկայ տարուան ընթացքին՝ ընկերակցութեամբ պահեստի ուժերուն եւ ապագային պահակագունդին: Անոնց փոխարէն՝ Իրաքէն պիտի հեռանան մեծ թիւով ամերիկացի պինուորներ (մտաւորապէս 80 հազար):

Փենթակոնը շատոնց մշակած էր այս ծրագիրը, սակայն անոր գործադրութիւնը կը յետաձգէր, յուսալով որ այլ երկիրներ պինուոր պիտի ուղարկէ Իրաք՝ թեթեւեցնելով Ուաշինկթոնի բեռը: Այս ուղղութեամբ Փենթակոնին նախատեսութիւններն ու ակնկալութիւնները չիրականացան:

Միւս կողմէ, Իրաք ուղարկուած լեհական ուժերը իրենց առաջին պոզիտիւններէ կը հեռացան մըս սպանուեցաւ Զարպայալի մօտ, ուր պինուորական փոխադրակառքեր յարձակումի ենթարկուած էին: Լեհ պինուորները հակադարձած են կրակ բանալով, սակայն պինեայներ խոյս տուած են:

Իրաքի մէջ ամերիկացի երկու պինուորներ այս սպանուեցան Սուրիոյ սահմանին մօտ: Միջադէպը տեղի ունեցած է Չորեքշաբթի երեկոյեան, երբ պինեայներ ձեռնառումբեր արձակած են անոնց դէմ:

Ամերիկեան ուժեր իրենց կարգին յաջողած են ձերբակալել նախկին վարչակարգին պատկանող բարձրաստիճան երեք պինուորականներ: Չերբակալութիւնը տեղի ունեցած է Ֆայլուձայի մէջ:

ՆԱԺԱՖԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ

Նաժաֆի կառավարիչը, որ բաց գործադրուի կոչ ուղղած էր Չորեքշաբթի օր, երէկ հրաժարեցաւ: Հայտարարեց Մաթար Մայեալի, որ գործադրուի յայտարարած էր իբրեւ բողոք դաշնակից ճակատին դէմ, երէկ յայտարարեց, որ կը հրաժարի, որովհետեւ որեւէ բան ընելու իրաւասութիւն չունի, սակայն ամէն սխալ երեւոյթի համար կը մեղադրուի: Մայեալի նշանակուած էր ամերիկացիներուն կողմէ: Ան ըսաւ, որ կառավարիչները կը նշանակուին գոհացնելու համար հանրութիւնը, սակայն ի՞նչպէս կարելի է սահկա իրականացնել, երբ նուազագոյն որոշումը տալէ առաջ, կը պահանջուի խորհրդակցի դաշնակից ուժերուն հետ: «Ժողովուրդը շատ բան կը պահանջէ, իսկ մեր կարելիութիւնները սահմանափակ են», աւելցուց Մայեալի:

(ԱՅՓ)

ԼԻԲԱՆԱՆԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝

ԱՌԼԱԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Նոյեմբեր 18ին
ԻՒՆԷՍՔՕ ի սրահին մէջ
Երեկոյեան 8:30-ին

տոմսերը՝
Trading Places 01 611600, CD-Thèque Ashrafieh - ABC,
Համագրայինի գրասենյակ, Նախկին գրասենյակ
եւ Ազգային Դպրոցներէն

BYBLOS BANK